ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3171-Ա « 08 » օգոստոսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 18-Ի Հ.309-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.309-Ա որոշման համաձայն՝ 59.349.999.88 (հիսունինը միլիոն երեք հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսունինը դրամ ութսունութ լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.309-Ա որոշման հավելվածում նշված կանգառասրահներն անհատույց օտարվել (նվիրվել) է «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.309-Ա որոշումը.

1.Լիազորել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել 33 հատ կանգառասրահների նվիրատվության պայմանագիր:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246